ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

<< >> _____ 2020թ. ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

N: _____ հեռ. (0312) 3-26-10

ՈՒՂԵՐՁ

ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ՝ ՄԱՐՏԻ 8-Ի ԱՌԹԻՎ

Սիրելի՛ կանայք և աղջիկներ, մայրեր և քույրեր, ջերմորեն շնորհավորում եմ ձեզ կանանց միջազգային օրվա՝ մարտի 8-ի առթիվ: Թող ժպիտն ու բերկրանքը մշտապես ուղեկցեն ձեզ, շրջապատված լինեք ձեզ սիրող և հարգող մարդկանցով, լինեք սիրված և երջանիկ:

Կանանց անձնվեր աշխատանքը կարևորագույն դեր ունի պետության բոլոր բնագավառների կայացման գործում: Ձեր գիտելիքների, աշխատասիրության և իմաստության շնորհիվ դուք հաղթահարում եք ժամանակի ցանկացած մարտահրավեր՝ միաժամանակ նվիրված լինելով ձեր ընտանիքներին և հարազատներին:

Թող այս լուսավոր տոնի ջերմ մաղթանքները ուղեկցեն ձեզ ողջ տարվա ընթացքում՝ տոնի վերածելով յուրաքանչյուր օր:

Եղեք անվախ ձեր երազանքներում և համարձակ՝ դրանք իրականություն դարձնելու ճանապարհին:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ